**Արձանագրություն N 5**

**«ԲՀԴ- ԳՀԱՇՁԲ-21/1 » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

Ք. Բյուրեղավան 14 հուլիսի 2021թ.

ժամը՝ 13:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Պողոսյան , Վ. Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյան

**1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>**

(Ա. Հարությունյան )

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունների շտկման մասին
3. Գնահատման մասին
4. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**<u>2.Անհամապատասխանությունների շտկման մասին</u>**

**(Ա. Հարությունյան )**

Մասնակիցների կողմից ծրարները կազմվել ու ներկայացվել են Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակիցների.

**1.Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ -ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթում**

- ✓ Առաջին չափաբաժնում մասնակցի՝ հավելված 2 /Գնային առաջարկ/-ում ներկայացրած գնային առաջարկը և առանձին ենթաբաժինների գումարը չի համընկնում: Մասնավորպես, մասնակցի ներկայացրած ծավալաթերթի առանձին ենթաբաժինների գումարը կազմում է 4700020 ՀՀ դրամ, իսկ մասնակցի գնային առաջարկում գրված է 4700000 ՀՀ դրամ: Առաջին չափաբաժնում /1-4 ենթաբաժինների համար/ շտկման ենթակա մյուս անհամապատասխանությունը վերաբերում է տոկոսային կշիռներին: Մասնակիցի ներկայացրած ծավալաթերթում տոկոսային կշիռները նույնն են ինչ նշված է հրավերում: Սակայն մասնակցի ներկայացրած գներով կշիռները տարբերվում են հրավերում նշված կշիռներից: Օրինակ առաջին չափաբաժնի առաջին ենթաբաժնի կշիռը մասնակցի նշած գներով պետք է լինի 4.12 և այլն:
- ✓ Նույն խնդիրը վերաբերում է նաև երկրորդ չափաբաժնին: Մասնակցի՝ հավելված 2 /Գնային առաջարկ/-ում ներկայացրած գնային առաջարկը և առանձին ենթաբաժինների գումարը չի համընկնում: Մասնավորպես, մասնակցի ներկայացրած ծավալաթերթի առանձին ենթաբաժինների գումարը կազմում է 1460011 ՀՀ դրամ, իսկ մասնակցի գնային առաջարկում գրված է 1460000 ՀՀ դրամ: Տոկաասային կշիռների մեջ շեղում նույնպես

ProTender©
www.protender.am

առկա է: Ի տարբերություն առաջին չափաբաժնի, որտեղ պարզապես առկա էր կշիռների թվաբանական սխալ և մասնակցի նշած կշիռը փաստացի չէր համապատասխանում ծավալաթերթում նշված **ենթաբաժնի գումարի և բոլոր ենթաբաժինների գումարի հարաբերությանը, ապա երկրորդ չափաբաժնի առաջին ենթաբաժնի կշիռը նույնիսկ չի տեղավորվում օրենքով թույլատրելի շեղման սահմաններում:Մասնացի ներկայացրած գներով այս ենթաբաժնի կշիռը պետք է լիներ 8.77: Իսկ մնացած չորս ենթաբաժիններում առկա է նույն՝ փաստացի չհամընկման խնդիրը: Օրինակ երկրորդ ենթաբաժնի կշիռը պետք է ստացվեր 34.21 և այլն:**

1. **Լիլիթ-92 ՍՊԸ -ի կողմից հայտով ներկայացված ծավալաթերթում**

   - ✓ Առաջին հերթին մասնակիցը իր ծավալաթերում գրել է հրավերում նշված կշիռները, ուստի առկա է կշիռների անհամապատասխանություն՝ փաստացի ներկայացրած թվերի հետ և շեղում թույլատրելի սահմաններից: Մասնավորապես, առաջին չափաբաժնի առաջին և չորրորդ ենթաբաժինների կշիռները, մասնակցի ներկայացրած գներով շեղվում են նույնիսկ թույլատրելի համարվող սահմաններից: Օրինակ առաջին ենթաբաժնի կշիռը ըստ մասնակցի ներկայացրած գների պետք է լիներ 5.42: Իսկ նույն չափաբաժնի երկրորդ և երրորդ ենթաբաժինները թեև գտնվում են թույլատրելի սահմաններում, այնուամենայնիվ չեն համապատասխանում մասնակցի ներկայացրած փաստացի գների հետ: Օրինակ երկրոդ ենթաբաժնի կշիռը պետք է լիներ 48.34 և այլն:
   - ✓ Երկրորդ չափաբաժնում առկա է տեխնիկական խնդիր: Ծավալաթերթի մի մասում չկան ընդհանուր գները, մի մասում չկան կշիռները, ուստի շեղված են նաև բոլոր կշիռները:

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել **որոշեց Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ -ին, և Լիլիթ-92 ՍՊԸ -ին** որոնք պետք է ներկայացնեն շտկումները մինչև 09.07.2021թ ժամը 12:00:

Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցներն էլ ներկայացրել են համապատասխան շտկումները, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**3.Գնահատման մասին**
**(Ա. Հարությունյան )**

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակից:

Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| ***Ընտրված մասնակից ճանաչել՝*** | | |
| 1 | Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ | 1,2 |
| ***Երկրորդ տեղ զբաղեցնող*** | | |
| 1 | Ավագ Շին 1 ՍՊԸ | 1,2 |
| ***Երրորդ տեղ զբաղեցնող*** | | |
| 1 | Հյուր Կոնստրուկտոր ՍՊԸ | 1 |
| 2 | Առտան Շին Տեխնոլոջի ՍՊԸ | 2 |
| ***Չորրորդ տեղ զբաղեցնող*** | | |
| 1 | Առտան Շին Տեխնոլոջի ՍՊԸ | 1 |
| 2 | Լիլիթ-92 ՍՊԸ | 2 |
| ***Հինգերորդ տեղ զբաղեցնող*** | | |
| 1 | Լիլիթ-92 ՍՊԸ | 1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**4. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին**
**(Ա. Հարությունյան )**

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Պողոսյան

Վ. Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

ProTender©
www.protender.am